



The Armenian Center
for National and International Studies

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն

Армянский центр стратегических и
национальных исследований

Արմինե Ղազարյան

*Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոնի փորձագետ*

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՆԵՐԿԱՅԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՔԵՐԸ

27 դեկտեմբերի 2011թ.
Երեւան

Հոդվածագրի տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:

© 2011, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրատարակումը առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության՝ արգելվում է:

© 2011, Армянский центр стратегических и национальных исследований.
Публикация статьи или отдельных ее частей без письменного разрешения АЦНИ запрещена.

© 2011, Armenian Center for National and International Studies.
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՆԵՐԿԱՅԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՔԵՐԸ

Այս անցնող տարին

Հերթական վերլուծությունն են ուզում գրել, տարեվերջ է, մտածեցի՝ ամփոփ ներկայացնել այս տարվա ընթացքում քաղաքական դաշտի որոշակի առանձնահատկություններ, ավելի ուշագրավ եւ քննարկվող թեմաները: Ձեւաչափն ինձ անձանոթ է, որով պետք է գրեմ, բայց պիտի ռիսկի դիմեմ:

Այն, որ Հայաստանի հասարակությունն իր խնդիրները չի կարողանում համակարգել եւ տեսնել մի /կամ մի քանի/ ընդհանուր պատճառի մեջ, քանի որ հասարակություն՝ որպես այդպիսին, չկա, մեկ անգամ արդեն գրել են, նաեւ օրակարգ չունի, դրա համար էլ նույնիսկ քաղաքական ուժերի համար է դժվար «սիրելի» դառնալ հասարակությանը, դրա փոխարեն ուժերը պետք է աշխատեն սիրելի դառնալ խմբերին, ավելի փոքր սոցիալական համայնքների, մինչեւիսկ առանձին անհատների: Այո, հասարակությունն օրակարգ չունի, տառապում է՝ կքած սոցիալական խնդիրներից, անապահովությունից, բայց դա այսօր հավաքական գործոն չի դառնում: Արտագաղթը մշտապես շարունակվում է, դա եւս պատճառ չի դառնում հստակ ձեւակերպված բողոքի: Չի սրվում իրավիճակը, սպասված հեղափոխությունը դանդաղում է, քանզի կա արտագաղթը, աշխատանքային միգրացիան: Իշխանությունները լավ են հաշվարկել. այստեղ գործում է հոգեբանական պաշտպանական մեխանիզմը, երբ ճնշում են, նվաստացնում, ստիպում, «ստրկացնում», եւ մի փոքր տեղ են թողնում ճնշվողին՝ դուրս «գալու» իրավիճակից, որ չհարձակվի: Գիտության մեջ փորձերը կենդանիների վրա են արել, առնետին «քշել են» անկյուն՝ առանց փախուստի տեղ թողնելու, վերջինս, պաշտպանողական բնագոյով՝ ագրեսիայով հարձակվել է: Մերոնք կռվի տարիներին են այս մեխանիզմը ճիշտ գործածել, ադրբեջանական բանակի ոգին են կոտրել՝ երբեմն փախուստի միջանցք թողնելով, որը զինվորի հոգեբանության եւ վարքագծի վրա ազդում է՝ ենթագիտակցականում ունենալով այդ «ստեղծությունը»՝ փնտրել փախուստի ձեւ եւ չկռվել, հեռանալ: Հիմա սեփական ժողովրդի վրա է փորձն արվում. փախուստի միջանցքը թողնված է, կառավարությունը հանգիստ է, կուսակցությունները քաղաքական առուծախ են անում իրար մեջ: Եվ թողնում են, որ ժողովուրդը դուրս գա, լքի երկիրը: Իսկ եթե չլինի այդ հնարավորությունը, ինչպես վարչապետն էր նկատել, «ծայրահեղական զանգվածը կանի հեղափոխություն»¹:

Իշխանության մեջ տարեվերջին մոտեցող կադրային փոփոխությունները իմիտացիոն բնույթից առաջ չանցան: Իշխանությունը մի նրբություն չէր հաշվարկել, բավարար քաղաքականացված բնակչությանը հասկանալի էր, որ «բարեփոխման» նպատակներով չէ, անգամ, իրոք, իմիտացիոն էլ չէ, այլ հերթական ընտրությունների նախապատրաստման դիրքավորվելու «նախավարժանք» է: ՀՀ հեղինակության որոշիչ սանդղակը «ներսում» արված նշանակումները կարող են լինել, օրինակ՝ երբ «հայտնաբերենք», թե ով է հանրապետության հերթական երկրորդ դեմքը եւ ինչի է նա ընդունակ²:

Տարվա կտրվածքով թվաց, թե մի քանի անգամ քաղաքական նոր իրավիճակ է ստեղծվում, թվում էր՝ տատանումներ կլինեն եւ, վերջապես, քաղաքական դաշտը կվերակազմավորվի, հատկապես ընդդիմադիր ոլորտում: Քաղաքական, եւ ոչ միայն քաղաքական վերլուծաբաններ ու փոքրիշատե վերլուծությանը հավակնող մարդիկ ոգեւորված կանխատեսումներ էին անում կամ հոռետեսորեն նկարագրում եւ բացատրում ամեն ուժի կողմից այս կամ այն քաղաքական վարքի պատճառներն ու հետեւանքները: Այսօրվա դիտանկյունից առավել լավ է երեւում կատարվածը:

Երկակի ստանդարտներն ամենուր են. երկակի ստանդարտներով գործող իշխանությունը եւ նույնպիսի ստանդարտներով գործող ընդդիմության մեծ թելը, այն է՝ ՀԱԿ-ը, երկխոսության «կառուցողական» քայլին դիմեցին, որը ոչ մի աղերս չուներ ու չունի հասարակության տարբեր շերտերի շահերի, հետաքրքրությունների հետ: Երկխոսությունն իբր այն հանգրվանն էր, որին «համոզված» ՀԱԿ զանգվածը փոխհատուցում էր կոտրված ոգեւորության համար՝ իբրեւ համարժեք քայլ: Իսկ «կոտրված» երկխոսության փոխհատուցումը, հավատացող բողոքավոր զանգվածի համար անժամկետ հայտարարված նստացույցն էր: Խափանված նստացույցի փոխհատուցումը դարձավ հայտնի քաղաքագիտական վերլուծությունը՝ ԲՀԿ-ին իշխանությունից «փախցնելու» գաղափարը:

Ազատության հրապարակի ոգին կարծես թե փոխվեց, առասպելված Ազատության հարթակից դեպի Թատերական հրապարակ, իսկ համընդհանուր եւ համաժողովրդական հանրահավաքները դարձան «տուսովոչնի», այսինքն՝ այնքան սեղմվեց, որ կոնկրետ մարդիկ գնում են կոնկրետ մարդկանց հետ շփվելու, կիսվելու, քննարկելու: Գարնանը դեռ ասելիք կար. գարնանը՝ մարտի 1-ի հանրահավաքի բազմամարդությունը գլխապտույտ էր առաջացրել ՀԱԿ առաջնորդի, ընտրախավի մոտ, եւ մյուս ընդդիմադիրների ընդառաջ արված կոնկրետ քայլերը չնկատեցին: Մարտի 17-ին Ազատության հրապարակ մտնելու համար ոստիկանների // հետ հաջող բանակցությունների արդյունքում էլ ունեցան գլխապտույտ եւ շատ կարեւոր գործեր, կրկին չնկատեցին «ծեռքսեղմման» համար մեկնած ծեռքերը՝ ընդդիմադիր դաշտն ուժեղացնելու համար: Այսօր ավելի քան հասկանալի է, թե ինչու: Ընդդիմության մեծ թելի վարած «նպատակային» քաղաքականությունն ու ռազմավարությունը, որով առաջնորդվել են, չէր կարող «գոհացնել», օրինակ, «Ժառանգությանը», եւ ոչ անսպասելի ներքին երկպառակությունների արդյունքում, ՀԱԿ-ից մի քանի «կտոր» կուսակցություն էլ «Ժառանգությունը» հետը դուրս կբերեր, ինչը կվնասեր «հայկական բոլոր ժամանակների նախագահի» հեղինակությանը: Իսկ զանգվածի հոգեբանությունը շատ հետաքրքիր է, զանգվածը մանկիկ է նման, զանգվածը իմպուլսիվ է եւ բնազդային, իր պաշտամունքի օբյեկտին մի քանի թոպեներում կարող է անխնա տապալել: Բայց կրկին լավ չեն հաշվարկել. կան մարդիկ, որոնք դեռ չեն կորցրել հույսն ու հավատը առաջին նախագահի նկատմամբ, պաշտպանական մեխանիզմների օգնությամբ շարունակում են սկզբունքային դիրքերում մնալ, մինչդեռ իրենց վերնախավը սկզբունքայնությունը իրական քաղաքականությանն անհարիր համարելով՝ քաղաքական անբովանդակ եւ ինքնությունից զուրկ կեցվածք ու վարքագիծ է դրսևորում: Այդ զանգվածը վաղը չի ներելու, որ իրենից ռեսուրսներ գնաց զուտ իմիտացիոն հանրահավաքներին:

Այս տարվա մեջ քաղաքական դաշտում կատարված մի շարք ուշագրավ իրադարձություններ իրենց համատեքստի մեջ՝ առանցքայնությամբ, տարբերեցին 2011-ը, օրինակ, 2010-ից. քաղաքական նոր վարքագիծ, նոր ձեռագիր, նոր կուսակցություն...

Այսպես՝ 2011թ. մարտի 15-ին «Ժառանգության» հիմնադիր առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանի հացադուլը բավականին «աղմուկ» հանած իրադարձություն է: Երկու շաբթից ավելի տարաբնույթ բազում հրապարակումներ եւ կարծիքներ շրջանառվեցին, լակնուսի թղթի էֆեկտը գործեց. գործող ուժերի մեծամասնությունն ի ցույց դրեց իր իրական դիրքորոշումներն ու նկրտումները: Օրինակ՝ իշխանությունը մի զարկով «փոշիացրեց» Մարդու իրավունքների «նորընտիր» պաշտպանին³, երբ արհամարհեց նրա կոչը՝ թույլատրելու վրանի տեղադրումը: ՀԱԿ-ը իրեն ավելի կոնկրետ եւ բացահայտ դրսևորեց՝ որպես տոտալիտար մենաշնորհային եւ անողոք ընդդիմություն այլ ընդդիմադիր ուժերի եւ հակառակը՝ փափուկ, երկխոսության պատրաստ եւ սիրալիք իշխանության նկատմամբ: ՀԱԿ-ի տոտալիտարիզմը դրսևորվեց նաեւ իր մեջ այլակարծություններ բացառելուն ուղղված ելույթի ժամանակ⁴:

Այլ ուշագրավ երեւույթ է նկատվում, թերեւս կրկնվում է մի քանի անգամ, տարվա տարբեր հատվածներում: Սոցիալական ցանցերում, տարբեր ինտերնետային թերթերում կատարում են հարցումներ՝ քվեարկելու հաջողված կամ անհաջող քաղաքական գործչի «բացահայտմանը»: Այդ ինտերակտիվ հարցումներում գրեթե մշտապես 5-6 անունների մեջ

նշվում է Արթուր Բաղդասարյանը: Տարվա քաղաքական դաշտին մակերեսորեն հետևած մարդու, ինչպես նաև բավականին տեղեկացված մյուսի մոտ հարց կարող է ծագել, 2011-ին ինչ կարելու՞ լավ կամ վատ գործունեություն է ծավալել Ա.Բաղդասարյանը, որ ընդգրկվում է ցանկի մեջ: Հարցը գուցե հռետորական հնչի, բացատրությունների կարիք լինի-չլինի, բայց ասոցիատիվ հիշեցի Ֆեյսբուք սոցիալական ցանցի մարքեթինգին վերաբերող խմբերից մեկում վերջերս կարդացած մի հետաքրքիր իրողություն: «Ֆրանսիայի կառավարությունը հայտնի մարքեթինգային քայլ կատարեց այն ժամանակ, երբ կարտոֆիլը քիչ «հանրաճանաչություն» ուներ երկրում: Բացասական վերաբերմունքն այդ մթերքի նկատմամբ հաղթահարվեց այն ժամանակ, երբ նախարար Տյուգոն հրամայեց պահակներ կանգնեցնել կարտոֆիլի դաշտերում: Իհարկե, ժողովրդի մեջ տարածվեց լուրն այն մասին, որ երեւի շատ արժեքավոր մթերք է, որ հսկվում է, եւ դրա պահանջարկը բարձրացավ»⁵: Որպես քաղաքական գործիչ /ոչ թե որպես պաշտոնյա/ Արթուր Բաղդասարյանի մասին հիշեցնելը շատ կարելու է «խորհրդանշական» բնույթ ունի ՀՀ-ի համար՝ մինչև ԱԺ 2012թ. ընտրություններ «Օրինաց երկիր» կուսակցությանը հարություն տալու եւ ՀՀ-ին սատարելու համար, բայց այսքան կոպիտ «գործիքակազմով» PR-ն էլ թերեւս չաշխատի:

Այսօր լայն զանգվածի համար մշակույթ երեւույթը հեռուստատեսությունն է, միշտ էլ մշակույթի տարբեր ճյուղեր զանգվածային չեն եւ չեն եղել, սակայն, «մշակութային կյանքը» մայրաքաղաքային «կենտրոնացումից» առավել անհասանելի է տարբեր մարդկանց: Իսկ ժողովրդին ի՞նչ առաջարկեց հեռուստատեսությունը 2011-ին եւ ինչպիսի՞ պահանջներ բավարարեց:

Մի քանի հեռուստաընկերություններ խիստ գրաքննությամբ ցուցադրում, մեկնաբանում, լուսաբանում են միայն ՀՀ նախագահին /ոչ մեկի համար նորություն չէ/ համեմելով PR-ային հնարավորություններով եւ քմահաճությամբ: Հեռուստաընկերությունների մյուս մասը նույն բանն է անում՝ զլխավոր հերոսի տարբերությամբ, այսինքն՝ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի օրակարգի վերլուծությամբ է զբաղված: Երկու դեպքում էլ երկրում տեղի ունեցող իրադարձությունները կամ դրանց մի մասի իրական կողմը չեն հասնում լայն զանգվածներին, ժողովրդին: Բայց դիտենք այլ կողմից: Լրատվությունից բացի, հեռուստատեսությունը հեղեղված է հայկական սերիալներով՝ բավականին տհաճ, վտանգավոր եւ ազդեցիկ՝ զարգացող սերնդի համար: Առհասարակ, քննադատությունները շատ են, բազմաթիվ, եւ դրանք հիմնականում մամուլում կամ ինտերնետային տարբեր ցանցերում ու բլոգներում են քննարկվում, իսկ հեռուստադիտող շարքային քաղաքացին, որ հեռու է այդ քննարկումներից եւ իրեն հասանելի ֆիլմի մասին առավել «մաքուր»՝ առանց թելադրված կարծիքի է, նայում է սերիալը եւ առնվազն քթի տակ դժգոհում: Ստացվում է եռանկյունի. մի մասը նկարահանում է սերիալ, մի մասը խաղում է, մյուս մասը քննադատում, նայում եւ քննադատում: Բայց որտե՞ղ է մեխը...

Այսպես՝ սերիալներում արտացոլված է այն կյանքը, որը «Հայլուրը» կամ մյուս լրատվականները շատ խնամքով մոնտաժ են անում: Ուրեմն Հայաստանի հեռուստաեթերներում կա ազատություն, միայն թե այնքանով է քողարկված, որ տարբեր պատգամավորներ ու գործարարներ ուրիշ անուններով են հանդես գալիս: Բացատրեմ՝ ինչպես. հայկական սերիալներում ահասարսուռ տեսարաններով են ուղեկցվում պատգամավորների, գործարարների քայլերը, անբարոյական վարքագիծը, «աղավաղված» ընտանիքներն ու ընդհատակյա բիզնեսը: Երկար ժամանակ լրատվությամբ կատարելապես քարոզված կերպարներն ու հարաբերությունները հօդս են ցնդում մարդկանց ենթագիտակցականի հնարավորությունների շնորհիվ, երբ ցուցադրվում է «անշառ» ֆիլմ: Օլիգարխիկ ՀՀ-ի եւ ԲՀԿ-ի համար դա սեւ PR է, քանզի Հայաստանը փոքր երկիր է, եւ ցանկացած սերիալ, որ նկարահանվում է մեր երկրում, դա իրականությանը մոտ ցուցադրություն է: Քաղաքը բավականին փոքր է, եւ երբ նկարվում է, օրինակ, երեւանյան որեւէ հայտնի փողոցում նույն պատկերը, գրեթե բոլորին այն ծանոթ կարող է լինել: Ֆիլմից դուրս քաղաքային կոլորիտը, ոճը նույնն են, անձը հայտնվում է նույն միջավայրում, պայմաններում, շքեղ սեւ մեքենաների առկայություն, սեւ կոստյումներով տղամարդիկ, բավականին մոդայիկ դարձած թիկնապահ խմբեր, պատգամավորներ, գործարարներ, ի

դեմս սերիալի՝ նրանց շրջապատող մարդիկ, առնվազն «մարդասպաններ»: Այնպես որ, գուցե «առաջատար» կուսակցությունները թույլ տան եթեր՝ առանց մոնտաժների, որը գուցե պակաս «չար» կլինի, քան իրենք ներկայացվում են սերիալներում^{1/}:

Այս տարի ուժային կառույցներում, հատկապես բանակում ավելացել են սպանությունների եւ ինքնասպանությունների քանակը, քրեական եւ քրեածին պայմաններն ու իրադարձությունները: Թյուր կարծիք է, թե դրանք երբեւէ չեն եղել: Հարցը տարբեր տեսանկյուններից դիտարկելու խնդիր կա, ի վերջո՝ բազմակողմանի ուսումնասիրության խնդիր կա: Օբյեկտիվորեն՝ մի կառույցում, որտեղ հավաքվում են ինքնահաստատման փուլում գնվող ամենատարբեր մակարդակի ու որակի ընտանիքներից պատանիներ, երիտասարդներ, կլինեն բազմաթիվ դեպքեր, որը «իշխանության» համար պայքարի դրսեւորում է, եւ որում գործում է տեսակի պահպանման բնագործ: Սակայն խնդիրն ավելի է սրվում, երբ այդ իրադարձությունների շուրջ երկրորդ քրեածին իրավիճակն է «պատրաստվում», օրինակ՝ որպես ինքնասպանություն, երբ ակնհայտ ուժի կիրառում է եղել: Ներքին գործերի համակարգում, բանակում՝ ծառայության մեջ երիտասարդի ադապտացիան եւ խնդիրների լուծման արդյունքը, հետեւանքը պետք է վերահսկվեն, մարդիկ, զինվորներն իրենց պետք է պաշտպանված եւ ապահով զգան: Եթե դիտարկենք հասարակության մեջ առկա վերաբերմունքն այդ իրադարձությունների նկատմամբ, ապա կրկին հակամարտ դաշտ կտեսնենք: Քաղաքական ակտիվ զանգվածի մի մասն ընդունելով համակարգի «անկատարությունը», ուզում է առանձնանալ իր «պետական մտածողությամբ» եւ փակ պահել թերությունները երկրի ներսում, որպեսզի օտարը չօգտվի դրանից: Մյուս մասը բարձրաձայնում է՝ ստին, կեղծիքին չհարմարվելով, որպես միջոց արդարության վերականգնման կամ «լսելի դառնալու», ժողովրդավար հայացքներով եւ քաղաքացիական հասարակության ստեղծման հույսերով: Հատվածական կարծիքներով, սկզբունքներով եւ գործունեությամբ խախտվում է ժողովրդի միասնականությունը, բայց նաեւ քաղաքացիական հասարակության ծիլերն են երեւում:

Հայ «հասարակության», ժողովրդի կյանքը, ապրուստը դարձել է «սպասումների» կծիկ. ապրել «այս միջադեպից՝ այն քաղաքական իրադրություն», եւ այսպես երկար ձգվող շղթա: Եթե դա քաղաքական գործիչների կյանքն է, դա նաեւ նրանց կենսակերպն է, ապա խնդիրն այն է, որ հասարակ, շարքային քաղաքացին էլ է այդպես ապրում՝ «մինչեւ» այս կամ այն ընտրություն: Իսկ ճշմարիտն այն է, որ Հայաստանի քաղաքացին ուղղակի ապրի, թեկուզ իր բաժին, ոչ «արհեստածին» հոգսերով, այլ ոչ թե «մինչեւ»...

Արմինե Ղազարյան

*Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոնի փորձագետ*

27 դեկտեմբերի 2011թ.
Երեւան

¹ <http://zham.am/index.php?lid=am&pageName=verlucakan&id=406992499>

² <http://news.am/arm/news/33240.html>, կամ <http://lurer.com/politics/3487>

³ <http://www.tert.am/am/news/2011/03/21/ombudsmankaren/>

⁴ Լեւոն Տեր Պետրոսյանը հայտարարելով, որ գործարքի է գնում իշխանության հետ, մարտի 17-ի հանրահավաքում ելույթի ժամանակ հայտարարեց. «Մեր շարքերում այլախոհներին պետք է ստիպել ենթարկվել մեծամասնության կարծիքին»:

⁵ <http://www.facebook.com/groups/241701142526322/329053310457771/>